ՈՐՈՇՈՒՄ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ

1949 ԹՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ՆԻՍՏԻ

Նկատի առնելով, որ 1949 թվի դեկտեմբերի 2-ին լրանում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Նորին Ս. Օծության Տ. Տ. Գեորգ Զ.ի ծննդյան 80-ամյակը եվ եկեղեցական, հասարակական ու մանկավարժական գործունեության 60-ամյակը, եվ հավատացյալները բուռն ցանկություն են հայտնում մեծարելու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նոր զարթոնքը նշանավորող ալեզարդ Հայրապետի հոբելյանը եվ նշելու նրա եկեղեցական-վարչական, ազգային-հասարակական, մանկավարժական-դաստիարակչական ու երաժշտական բազմաբեղուն գործունեությունը, Գերագույն Հոգեվոր Խորհուրդը որոշում է.

ա) 1950 թվին տոնել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.ի ծննդյան 80-ամյա հոբելյանը, տոնակատարությանը տալով համազգային նշանակություն եվ Մայր Աթոռի Գահակալին արժանավայել հանդիսավորություն:

բ) Կազմակերպել հոբելյանական երկու կենտրոնական հանձնաժողովներ՝ Մայր Հայրենիքում եվ Սփյուռքում: Մայր Հայրենիքի Կենտրոնական Հոբելյանական հանձնաժողովի Նախագահ նշանակել հայազգետ Երվանդ Շահազիզին, իսկ Սփյուռքում՝ Մեծի Տանն Կիլիկիո Շնորհազարդ Գարեգին Կաթողիկոսին, փոխ-նախագահությամբ Երուսաղեմի եվ Պոլսի Պատրիարքական Տեղապահների:

գ) Առաջարկել Սովետական Միության եվ Սփյուռքի բոլոր թեմական Խորհուրդներին՝ կազմակերպել տեղական հանձնաժողովներ, նախագահությամբ թեմական առաջնորդների եվ մասնակցությամբ ազգային-եկեղեցական ու հասարակական այլ կազմակերպությունների աչքի ընկնող ներկայացուցիչների:

Ծանոթ.—Երուսաղեմի եվ Պոլսի Պատրիարքարանների շրջանակներում հոբելյանական տոների կատարումը թողնվում է Պատրիարքական Տեղապահների հայեցողությանը:

դ) Հանդիսավոր տոնակատարությունը Մայր Հայրենիքում կատարել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 1950 թվի սեպտեմբերի 30-ին՝ Նորին Ս. Օծության անվանակոչության օրը, իսկ Սփյուռքում հանդիսավոր օրվա ժամանակի նշանակումը թողնել Սփյուռքի Հոբելյանական Կենտրոնական Հանձնաժողովի հայեցողությանը:

ե) Հոբելյանական նախապատրաստական աշխատանքները, եվ բուն իսկ հանդիսավոր տոնակատարությունը, տանել հայ ժողովրդի եվ Ս. Էջմիածնի, Սփյուռքի եվ Մայր Հայրենիքի բարոյական կապի ամրապնդման եվ Մայր Աթոռի ու իր ազգային-կրոնական եվ մշակութային հաստատությունների վիճակը հաստատապես ապահովելու ուղղությամբ:

զ) Մայր Տաճարի հիմնական վերանորոգումը եվ պայծառազարդությունը չանալ սկսելու հոբելյանական հանդիսավորության օրերին, նկատի ունենալով Բարեբարի՝ Տաճարի նորոգման աշխատանքները արագացնելու ցանկությունը:

է) Վաղապես լույս ընծայել Նորին Վեհափառության ազգային-եկեղեցական ընույթ կրող կոնդակների, ողջույնների եվ քարոզների ժողովածուն եվ երաժշտական ընտիր ստեղծագործությունների մի հատորյակը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

18 Նոյեմբերի 1940 թ.
Ս. Էջմիածին